Հուսիկ Արա

Քեզ այսպես չէինք երազել

Մի՛ լաց, տղա, որբ ու անտեր,
փողոցներում մեծացած փոքրիկ,
որ իմ երկրի դրոշի գույնով
ինձ տրված ազատությունն ես:

Քեզ նկարել էինք առավոտի գույներով
և կեսօրվա արևով շրջանակել,
պատմում էինք ոսկեգեղմ,
ծավի աչքերով ու կրակարյուն:
Էպոսի իրական տղան էիր.
թուրը աջ ու ձախ կտրում էր ձեռքիդ,
ու կրակի կտոր ձին տակիդ էր խաղում:

Ուրիշ էր պատմողը,
ու երկնքից ընկնող երեք խնձորն էր ուրիշ,
երբ հեքիաթը տեղափոխվեց իրականություն:
Սև անտառում մոլորվեց,
մութ գնդան ընկավ արքայազնը
անշեջ հուրը բերող,
իսկ մինուճար աղջիկը թագավորի
(չար վհուկի կախարդանքն էր),
դղյակում պառավեց՝ գիշերուզօր սպասելով կրակին:

Ընդգծված վերև ես՝ բուրգի պես ցցուն,
ու հարթեցված ներքև՝ հավասար խուզված,
քո հացկատակն ենք, մեզ շպրտված ազատություն:
Ձեռքս խղճիդ դրած պիտի երդվեի.
տեր լինելու համար էիր, մինչդեռ եղար ծառա:

Էլ առաջվա պես ինձ չեմ ուտում, ներսս կրծում
հերսոտած, թե հեքիաթը, ախր, ինչո՞ւ պիտի այսպես
ավարտվեր.
արի, տղա, ծվարիր թեերիս տակ՝ մինչև որ մեծանաս: